ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2024 թվականի №-----Ա

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի օգոստոսի 29-ի №MH/L230560/1.0/AA գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու հայտ (այսուհետ՝ Հայտ), որի համաձայն՝ Ընկերության նկատմամբ իրական վերահսկողություն իրականացնող անուղղակի բաժնետեր «Մոբիլնիե Տելեսիստեմի» հանրային բաժնետիրական ընկերությունը ցանկանում է «ԱՐԱՄԱՅՈ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունից ձեռք բերել վերջինիս պատկանող՝ Ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 30-ի №ԳԲ/34.2-Մ2-9/3232-2023 գրությանն ի պատասխան՝ Նախարարությունն իր 2023 թվականի հոկտեմբերի 26-ի №01/11.1/9867-2023 գրությամբ խնդրել է Հայտի քննարկման շրջանակում՝ պետական շահերից ելնելով Ընկերությունից ստանալ լրացուցիչ պարզաբանումներ, որի կապակցությամբ Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4065-2023 գրությանն ի պատասխան Ընկերությունն իր 2023 թվականի նոյեմբերի 13-ի №MH/L230730/1.0/AA

գրությամբ ներկայացրել է Նախարարության կողմից հայցվող պարզաբանումների առնչությամբ լրացուցիչ տեղեկատվությունը,

գ) Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 15-ի №ԳԲ/34.2-Մ2-8/4375-2023 գրությանն ի պատասխան Նախարարությունն իր 2023 թվականի դեկտեմբերի 27-ի №01/11.1/12170-2023 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ Նախարարությունն իր 2023 թվականի նոյեմբերի 9-ի №01/11.1/10659-2023 գրությամբ արդեն իսկ դրական դիրքորոշում էր ներկայացրել Հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 7-ի №ԳԲ/34.2-Մ2-8/4221-2023 գրությամբ ներկայացված՝ Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու մեկ այլ հայտի վերաբերյալ, ինչպես նաև ելնելով պետական շահերից՝ Նախարարությունն իրեն վերապահված իրավասությունների շրջանակում առարկում է Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու վերաբերյալ Հայտով նախատեսված գործարքի կայացմանը,

դ) Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործարքի համաձայնեցումը կարող է մերժվել, եթե համաձայնություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկատվությունը չեն համապատասխանում Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, ինչպես նաև իրավասու մարմնի գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությունը կամ պետական շահերը, իսկ մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրված լիցենզիայի կամ թույլտվության առկայության դեպքում, երբ չի հիմնավորվում անհրաժեշտ փորձի առկայությունը,

ե) Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը գործարքի կնքմանը համաձայնություն տալը մերժում է, եթե այն իրավասու մարմնի գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությանը կամ պետական շահերին,

զ) Նախարարությունը, Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով, որպես իրավասու մարմին, առարկել է գործարքի կնքմանը, ինչն Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գործարքի կնքմանը համաձայնության տրամադրման մերժման հիմք է, և

հիմք ընդունելով Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2022

թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Հայտով նախատեսված՝ Ընկերության նկատմամբ հսկողության փոխանցման գործարքի կնքմանը համաձայնության տրամադրումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2024 թ.